NCDC

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԱՅԻՍ 2018 թ.

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

2018թ. մայիս ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են տիֆեր, պարատիֆեր, սիբիրյան խոց, կատաղություն, խոլերա, ռիկետցիոզներ, փայտացում, դիֆթերիա, սուր պոլիոմիելիտ:

Իմունականխարգելում

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: 2018թ. մայիս ամսին հանրապետությունում կարմրուկի դեպք չի արձանագրվել: Գրանցվել է կապույտ հազի 16 դեպք՝ չպատվաստած և թերի պատվաստված երեխաների շրջանում:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը մայիս ամսին կազմել է 89,8% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 92,3% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 95.25% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

Հատուկ վտանգավոր վարակներ

<u>Բրուցելոզ</u>

Գծապատկերի տվյալները վկայում են այն մասին, որ հանրապետությունում 2018թ. մայիսի ընթացքում արձանագրված բրուցելոզ հիվանդության դեպքերը նախորդ ամսվա հետ համեմատ նվազել են 1.6 անգամ, իսկ 2017թ. նույն ժամանակահատվածի հետ՝ 4.4 անգամ: 2018թ. մայիսի ընթացքում

հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 11 դեպք, որից 3-ը՝ Երևանում, 4-ը՝ Սյունիքի, 2-ը՝ Արագածոտնի, 1-ը՝ Կոտայքի, 1-ը՝ Վայոց Ձորի մարզերում: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:

Գծապատկեր 1



Հայաստանի Հանրապետությունում 2017-2018 թթ հունվար-մայիս ժամանակահատվածում արձանագրված բրուցելոզի դեպքերը

Սննդային թունավորումներ

Հանրապետության տարածքում մայիս ամսին արձանագրվել է սննդային թունավորման 21 դեպք՝ 25 տուժածով, առանց մահվան ելքի, որից բոտուլիզմի 3 դեպք՝ 3 տուժածով, սնկից թունավորման 16 դեպք՝ 18 տուժածով, ստաֆիլակոկային սննդային թունավորման 1 դեպք՝ 1 տուժածով և սուր էկզոգեն սննդային թունավորման 1 դեպք՝ 3 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում արձանագրվել է թունավորման 4 դեպք՝ 4 տուժածով: Սննդային թունավորման դեպքերը արձանագրվել են քաղաք Երևանում, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Վայոց Ձորի և Կոտայքի մարզերում: Բոտուլիզմի պատճառ է հանդիսացել տնային պայմաններում պահածոյացված սմբուկի խավիարը, սնկից թունավորման պատճառ է հանդիսացել տուժածների կողմից հավաքած սունկը, ստաֆիլակոկային սննդային թունավորման պատճառ է հանդիսացել խառը սննդի օգտագործումը, իսկ սուր էկզոգեն սննդային թունավորման պատճառ է հանդիսացել կողակ ձուկը: Սննդային

թունավորման դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ, բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով, տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

Աղիքային վարակիչ հիվանդություններ

Հայաստանի Հանրապետությունում 2018թ. մայիս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 885 դեպք, որից 196 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 689-ը՝ մարզերում: 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.1 անգամ: Միևնույն ժամանակ հունվար-մայիս ժամանակահատվածում աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան աճել 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ (դեպքերի թիվը աճել է 107-ով):

Գծապատկեր 2



2018թ. ապրիլ ամսվա համեմատ (796 դեպք) աղիքային վարակիչ հիվանդությունների դեպքերի թիվը աճել է 89 դեպքով:

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և

հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:

2018թ. մայիսի 17-18-ին Արմավիրի մարզում գտնվող «Հայաստանի հողեր» ՓԲԸ-ի խաղողի այգիներում աշխատողների շրջանում արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկում, որի ընթացքում հիվանդացել է 95 աշխատակից: Համաճարակաբանական և լաբորատոր հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ հիվանդացման պատճառ է դարձել նշված աշխատողներին տրվող սննդամթերքը, ինչը հաստատվել է այն փաստով, որ ինչպես հիվանդների, այնպես էլ սննդամթերքի լաբորատոր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է միևնույն մանրէն՝ ոսկեգույն ստաֆիլակոկը: Բոլոր հիվանդները ստացել են անհրաժեշտ բժշկական օգնություն Արմավիրի և Մեծամորի բժշկական կենտրոններում:

Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ

Հայաստանի Հանրապետությունում մայիս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը նվազել է 1.3 անգամ:

Սույն թվականի մայիս ամսին արձանագրվել է արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի 3 դեպք: Վարակման հավանական պատճառներն են՝ թմրամիջոցի գործածումը, բժշկական (ատամնաբուժական) միջամտությունը (3-րդի մոտ պատճառն անհայտ է):

Օդակաթիլային վարակներ

<u>Գրիպ և Սուր շնչառական վարակ</u>

2018թ. մայիս ամսին արձանագրվել է սուր շնչառական վարակներով՝ (այսուհետ ՍՇՎ), պայմանավորված հիվանդության ցածր ակտիվություն: ՍՇՎ դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1.1 անգամ: 2018թ. մայիսին հիվանդացության ցուցանիշը 2017թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 1.1 անգամ, 2016թ. հետ՝ ևս 1.1 անգամ՝ պայմանավորված հիվանդության սեզոնայնությամբ, հանրապետությունում շրջանառող գրիպի և այլ

սուր շնչառական վարակների հարուցիչների բազմազանությամբ: Առավել շատ դեպքեր շարունակվում են արձանագրվել են 0-4տ երեխաների շրջանում:

Գծապատկեր 3



2017-2018 թթ. հոկտեմբեր – մայիս ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների ցուցանիշն ըստ ամիսների 100 000 բնակչի հաշվարկով

Մայիսի ընթացքում գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդությունների և ծանր սուր շնչառական վարակների նկատմամբ հետազոտվել է 111 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է գրիպ Բ-ի 1 դեպք, գրիպի Ա տեսակի H1N1 ենթատեսակի 9 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է գրիպի Բ-ի 19 դեպք:

Օդակաթիլային այլ վարակներ (ջրծաղիկ, քութեշ, վարակային մոնոնուկլեոզ)

<u>Ջրծաղիկ</u>

Գծապատկեր 4



Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018 թթ հունվար-մայիս ժամանակահատվածում արձանագրված ջրծաղկի դեպքերը

Համաձայն վերլուծության տվյալների, 2018թ. մայիսին արձանագրված ջրծաղկի դեպքերը նախորդ ամսվա համեմատ հետ աճել են 1. 2 անգամ, 2017թ նույն ժամանակահատվածի հետ՝ 1 անգամ: Ինչ վերաբերում է ջրծաղկի տարածվածութանը հանրապետությունում, պատկերը հետևյալն է՝ Երևան քաղաքում՝ 1187 դեպք, Կոտայքի մարզում՝ 236 դեպք, Արարատի մարզում՝ 168 դեպք, Արմավիրի մարզում՝ 186 դեպք, Լոռու մարզում՝ 104 դեպք: 2018թ. մայիս ամսվա ժամանակահատվածում հղիների շրջանում արձանագրվել է հիվանդության 19 դեպք: Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԱՆ մոր և մանկան վարչություն, վերջիններիս նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով: Առավել շատ դեպքեր՝ (90%) արձանագրվել են 0-18տ, որից (45%) 3-6տ. երեխաների շրջանում՝ կազմակերպ հաստատություններում: Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորինս առաջին դեպքերը մեկուսացվում են և հսկողություն է սահմանվում հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:

<u>Քութեշ</u>

Գծապատկեր 5



Հայաստանի Հանրապետությունում 2017և 2018 թթ.հունվար-մայիս ժամանակահատվածում արձանագրված քութեշի դեպքերը

Գծապատկերի տվյալները վկայում են այն մասին, որ 2018թ. մայիսին արձանագրված քութեշի դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1.4 անգամ, 2017թ. նույն ժամանակահատվածի հետ աճել՝ 1. 4 անգամ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 3-6 տարեկան երեխաների շրջանում՝ 46 դեպք, ինչը

կազմում է ընդամենի 59.7%-ը: Դեպքերի 92. 2%-ը արձանագրվել է քաղաքաբնակ բնակչության շրջանում՝ պայմանավորված մարդկանց ավելի սերտ շփումով: Բոլոր դեպքերն ենթարկվում են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

<u>Վարակային մոնոնուկլեոզ</u>

Գծապատկեր 6



Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018թթ հունվար-մայիս ժամանակահատվածում արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը

Ինչպես երևում է գծապատկերից 2018թ. մայիսին արձանագրված մոնոնուկլեոզի դեպքերը նախորդ ամսվա համեմատ աճել են՝ 1.8 անգամ, իսկ 2017թ. նույն ժամանակահատվածի հետ՝ 1.5 անգամ: Արձանագրվել է վարակային մոնոնուկլեոզի 72 դեպք, որից 69-ը՝ (95.8%) 0-18 տարեկան երեխաների շրջանում:

Քիմիական թունավորումներ

Հայաստանի Հանրապետությունում մայիս ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 46%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 95%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը (30.1%) առաջացել է դեղամիջոցների՝ ծնողի անուշադրության հետևանքով և ինքնաբուժման նպատակով օգտագործման արդյունքում, 16.5%-ը՝ օրգանական լուծիչներից, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, 14.8% թունավոր կենդանիների խայթոցի արդյունքում, 18.7%-ն՝ ալկոհոլային թունավորումները՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 7.4%-ն՝

օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 6.8%-ը՝ թունաքիմիկատների և 5.7%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից:

2017թ. մայիս ամիսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատելիս, կարելի է դիտարկել, որ քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նվազել է 1.1 անգամ: